ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ։

Վեհափառ Հայրապետի բարի ցանկութեամբ և կամքի համաձայն՝ առաջիկայ 1888 թուականից սկսած Արարատ ամսագիրը թէ իւր բովանդակութեամբ և թէ դիրքի կողմանէ ենթարկուելու է փոփոխութեան։ Մայր Աթոռոյս միաբանութեան հետ հրաւիրվում են աշխատակցելու Արարատին և Ճեմարանի ուսուցչական խումբն, ինչպէս և ազգիս մէջ ամենուրեք գտանուող բանասէր, գիտնական և ուսումնական անձինք, որոնք հետաքրքրվում են ազգային պատմութեամբ, գրականութեամբ, ազգային եկեղեցւոյ և եկեղեցական դասի վիճակին, ինչպէս և հոգևոր ծխական դպրոցների բարեկարգութեան վերաբերեալ նիւթերով։ Արարատը կբովանդակէ իւր մէջ և ընտիր քարոզներ ու բարոյական գրուածքներ, ինչպէս և համառօտութիւնք թէ Նորին Օծութեան և թէ Ս. Սինոդի պաշտօնական կարգադրութեանց, որոնք կվերաբերին հայ եկեղեցական դասին և հայ դպրոցներին։ Կհաղորդուին նոյնպէս և ամեն տեղերի ազգայնոց մտաւոր և բարոյական վիճակին վերաբերեալ տեղեկութիւնք թէ ազգային հրատարակութիւններից և թէ թղթակցութիւններից քաղուածօրէն։ Խմբագրութիւնս յոյս է տածում, որ հայ բանասէրք չեն զլանալ իւրեանց գործակցութիւնն, որ Ս. Աթոռոյս ամսագիրը կարող լինի ճշգիւ ծառայել իւր նպատակին, որ է մտաւոր

և բարոյական կերակուր տալ իւր ընթերցողաց, մանաւանդ եկեղեցականաց, որոց մեծամասնութիւնն կարօտ է թէ գիտութեան և թէ ղեկավարութեան իւր պարտքը դէպի Սուրբ Եկեղեցին և դէպի իւր հօտը արդութեամբ կատարել կարողանալու համար։

Արարատի խմբագրութիւնը, Ազգին Օծութեան հրամանի համեմատ, պարտաւորվում է հրատարակութեան յարմար համարուած յօդուածների իւրաքանչիւր տպագրական թերթի համար վարձատրութիւն վճարել 25—40 ռուբլի, եթէ յօդուածագիրն այդ կըցանկայ։ Յօդուածների ընտրութիւնն և վարձատրութեան քանակութեան որոշումն կպատկանի մանաժողովին, որ հրամանաւ Ազգին Օծութեան կըկազմուի։

Արարատը կհրատարակուի ամիսը մի անգամ. բաժանորդագինը տարեկան է և սկսվում է Յունվար ամսից. բաժանորդագինն է Ռուսաստանում 4 ր. Տաճկաստանում, Պարսկաստանում և Եւրոպայում 5 ր. իսկ Հնդկաստանում և Եգիպտոսում 6 ռուբլի։ Հայաբնակ գաւառներում և քաղաքներում ստորագրուել ցանկացողք թող դիմեն տեղական Հոգ. իշխանութեան գործակալներին կամ ուղղակի Ս. Էջմիածին։ Հասցէն՝ Эчміадзинъ Типогр. Комитетъ—Տպարանական Ժողովին։